# ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

## Չինական ժողովրդական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև

Չինական ժողովրդական Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը,

ձգտելով աջակցել երկու պետությունների բարեկամական հարաբերությունների զարգացմանը,

Չինական ժողովրդական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հարաբերությունների հետագա ամրապնդման, ինչպես նաև երկու պետությունների և նրանց քաղաքացիների իրավունքների ու շահերի առավել արդյունավետ պաշտպանության նպատակով,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

### Սահմանումները

սույն Կոնվենցիայով.

1/ ,,հյուպատոսական հիմնարկ,, նշանակում է ցանկացած գլխավոր հյուպատոսություն, հյուպատոսություն, փոխհյուպատոսություն կամ հյուպատոսական գործակալություն,

2/ ,,հյուպատոսական շրջան,, նշանակում է այն շրջանը, որ հյուպատոսական հիմնարկին հատկացված է իր պարտականությունների կատարման համար;

3/ ,,հյուպատոսական հիմնարկի ղեկավար,, նշանակում է այն անձը, որին հանձնարարված է հանդես գալ որպես այդպիսին,

4/ ,,հյուպատոսական պաշտոնատար անձ,, նշանակում է ցանկացած անձ, ներառյալ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը, որին հանձնարարված է հյուպատոսական պարտականությունների կատարումը որպես այդպիսին,

5/ ,,հյուպատոսական հիմնարկի աշխատակից,, նշանակում է հյուպատոսական հիմնարկում վարչական կամ տեխնիկական պարտականություններ կատարող ցանկացած անձ,

6/ ,,անձնակազմի սպասարկման աշխատող,, նշանակում է հյուպատոսական հիմնարկի սպասարկման գծով պարտականությունները կատարող ցանկացած անձ,

7/ ,,հյուպատոսական հիմնարկի աշխատողներ,, նշանակում է հյուպատոսական պաշտոնատար անձինք, հյուպատոսական հիմնարկի աշխատակիցներ և սպասարկող անձնակազմի աշխատողներ,

8/ ,,հյուպատոսական անձնակազմի աշխատողներ,, նշանակում է հյուպատոսական պաշտոնատար անձինք /բացառությամբ հյուպատոսական հիմնարկի ղեկավարի/, ինչպես նաև հյուպատոսական հիմնարկի աշխատակիցներ և սպասարկող անձնակազմի աշխատողներ,

9/ ,,մասնավոր տնային աշխատող,, նշանակում է բացառապես հյուպատոսական հիմնարկի աշխատողի մոտ մասնավոր ծառայության մեջ գտնվող անձ,

10/,,հյուպատոսական շինություններ,, նշանակում է բացառապես հյուպատոսական հիմնարկի համար օգտագործվող շենքը կամ շենքերի մի մասը և տվյալ շենքը կամ շենքերի մի մասը սպասարկող հողակտորը ում էլ որ պատկանելիս լինի դրանց սեփականության իրավունքը,

11/ ,,հյուպատոսական արխիվներն ընդգրկում են հյուպատոսական հիմնարկի բոլոր թղթերը, փաստաթղթերը, թղթակցությունները, գրքերը ֆիլմերը, ձայնագրության ժապավենները, դիսկետներն ու ցուցակները՝ ծածկագրերի ու կոդերի, քարտարանների և կահավորանքի ցանկացած առարկաների հետ մեկտեղ, որոնք նախատեսված են դրանց պահպանվածությունն ապահովելու կամ պահելու համար,

12/ ,,ներկայացվող պետության նավ,, /բացառությամբ ռազմական նավերի/ նշանակում է ցանկացած նավ, որը գրանցված է ներկայացվող պետության օրենսդրությանը համապատասխան և իրավունք ունի շարժվելու ներկայացվող պետության դրոշի տակ,

13/ ,,ներկայացվող պետության օդանավ,, նշանակում է ցանկացած թռչող ապարատ /բացառությամբ ռազմական թռչող ապարատների/, որը գրանցված է ներկայացվող պետության օրենսդրությանը համապատասխան և իրավունք ունի կրելու այդ պետության տարբերիչ նշանները,

14/ ,, ներկայացվող պետության քաղաքացի,, նշանակում է ներկայացվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական

անձ, կիրառելի պարագաներում նշանակում է նաև ներկայացվող պետության ցանկացած իրավաբանական անձ,

15/ ,,ընտանիքի անդամ,, նշանակում է հյուպատոսական հիմնարկի աշխատողի կինը /ամուսինը/, երեխաները և ծնողները, որոնք ապրում են նրա հետ և նրա խնամքի տակ են գտնվում:

## Հոդված 2
## Հյուպատոսական հիմնարկներ բացելը

1. Ներկայացվող պետության հյուպատոսական հիմնարկ ընդունող պետության տարածքում կարող է բացվել միայն ընդունող պետության համաձայնությամբ:

2. Հյուպատոսական հիմնարկի գտնվելու վայրը, նրա կարգը, հյուպատոսական օկրուգը և հյուպատոսական պաշտոնատար անձանց թվաքանակը սահմանվում են ներկայացվող պետության և ընդունող պետության միջև կայացված համաձայնությամբ:

3. Հյուպատոսական հիմնարկի գտնվելու վայրի, նրա կարգի և հյուպատոսական օկրուգի կամ հյուպատոսական պաշտոնատար անձանց թվաքանակի հետագա փոփոխությունները ներկայացվող պետության կողմից իրագործվել կարող են միայն ընդունող պետության համաձայնությամբ:

4. Ընդունող պետության համաձայնությունն է պահանջվում նաև, եթե որևէ գլխավոր հյուպատոսություն կամ հյուպատոսություն ցանկանում է փոխհյուպատոսություն կամ հյուպատոսական գործակալություն բացել ոչ այն բնակավայրում, որտեղ այն գտնվում է:

5. Ընդունող պետության որոշակի արտահայտված նախնական համաձայնությունն է անհրաժեշտ նաև գոյություն ունեցող հյուպատոսական հիմնարկի մասը կազմող գրասենյակ բացելու համար /հիմնարկի գտնվելու տեղից դուրս/:

## Հոդված 3
## Հյուպատոսական հիմնարկի ղեկավարի նշանակումն ու ճանաչումը

1. Ներկայացվող պետության հյուպատոսական հիմնարկի ղեկավարի

դիվանագիտական հաղորդաուղիներով կամ այլ համապատասխան հաղորդաուղիներով նշանակումից առաջ պետք է ստացվի ընդունող պետության համաձայնությունը առաջարկվող անձի նկատմամբ:

Եթե ընդունող պետությունը որևէ անձի որպես հյուպատոսական հիմնարկի ղեկավարի նշանակմանը համաձայնություն չի տալիս, նա պարտավոր չէ այդպիսի մերժման շարժառիթները հաղորդել ներկայացվող պետությանը:

2. Ներկայացվող պետությունը դիվանագիտական հաղորդաուղիներով ընդունող պետության արտաքին գործերի նախարարին հյուպատոսական վկայագիր կամ մեկ ուրիշ համանուն փաստաթուղթ է ուղարկում հյուպատոսական հիմնարկի ղեկավար նշանակելու համար: Այդ փաստաթղթում նշվում են հյուպատոսական հիմնարկի ղեկավարի անունը, ազգանունը, նրա ատիճանակարգը, հյուպատոսական օկրուգը և հյուպատոսական հիմնարկի գտնվելու վայրը:

3. Հյուպատոսական հիմնարկի ղեկավարի նշանակման համար հյուպատոսական վկայագիրը կամ համանման այլ փաստաթուղթ ստանալիս ընդունող պետությունը նրան տալիս է էկզեկվատուրա /հյուպատոսական ճանաչումը հաստատող փաստաթուղթ/:

4. Բացառությամբ սույն հոդվածի 5 կետում և 4 հոդվածում նախատեսված դեպքերի, հյուպատոսական հիմնարկի ղեկավարը իր պարտականությունների կատարմանը ձեռնամուխ լինել կարող է միայն այդպիսի էկզեկվատուրա կամ այլ թույլտվություն ստանալուց հետո:

5. Ընդունող պետությունը կարող է հյուպատոսական հիմնարկի ղեկավարին թույլ տալ իր պարտականությունները կատարել ժամանակավոր հիմունքով՝ մինչև էկզեկվատուրա կամ այլ թույլտվություն ստանալը: Այս դեպքում կիրառվում են սույն Կոնվենցիայի դրույթները:

6. Հենց որ հյուպատոսական հիմնարկի ղեկավարին թույլ տրվի, նույնիսկ ժամանակավորապես, կատարելու իր պարտականությունները, ընդունող պետությունն անհապաղ այդ մասին ծանուցում է հյուպատոսական օկրուգի իրավասու մարմիններին: Բացի այդ նա ապահովում է այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի հյուպատոսական հիմնարկի ղեկավարը կարողանա կատարել իր պաշտոնական պարտականությունները և օգտվել սույն Կոնվենցիայից բխող արտոնություններից:

## Հոդված 4

### Հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պարտականությունների ժամանակավոր կատարումը

1. Եթե հյուպատոսական հիմնարկի ղեկավարը որևէ պատճառով չի կարող իր պարտականությունները կատարել կամ եթե այդ պաշտոնը թափուր է, ներկայացվող պետությունը կարող է ընդունող պետությունում ավյալ կամ մեկ ուրիշ հյուպատոսական հիմնարկի հյուպատոսական պաշտոնատար անձին կամ ընդունող պետությունում իր դիվանագիտական ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի անդամներից մեկին լիազորել որպես հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պարտականությունները կատարող: Ներկայացվող պետությունը պետք է ընդունող պետությանը վաղօրոք հաղորդի հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պարտականությունները կատարողի լրիվ անունը, ազգանունը պաշտոնն ու աստիճանը:

2. Հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պարտականություններ կատարողը օգտվում է սույն Կոնվենցիայով հյուպատոսական հիմնարկի ղեկավարին տրվող իրավունքներից, արտոնություններից և իմունիտետներից:

3. Դիվանագիտական անձնակազմի այն անդամը, որը նշանակված է հյուպատոսական հիմնարկի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, շարունակում է օգտվել դիվանագիտական այն արտոնություններից և իմունիտետներից, որոնք նրան տրված են իր դիվանագիտական կարգավիճակի համաձայն:

## Հոդված 5

### Ծանուցում ժամանման և մեկնումի մասին

1. Ներկայացվող պետությունը հյուպատոսական հիմնարկի գտնվելու վայրի իրավասու մարմիններին գրավոր հաղորդում է հետևյալը,

1/ հյուպատոսական հիմնարկի աշխատողների լրիվ անունը, ազգանունը, պաշտոնը և աստիճանը, նրանց ժամանման և վերջնական մեկնումի կամ նրանց պարտականությունների դադարեցման օրը, ինչպես

նաև հյուպատոսական հիմնարկում աշխատելու ժամանակամիջոցում նրանց ծառայողական դրության մեջ կատարված փոփոխությունների մասին,

2/ հյուպատոսական հիմնարկի աշխատողների ընտանիքի անդամների և մասնավոր տնային աշխատողների ժամանման և վերջնական մեկնումի օրը, ինչպես նաև նրանց կարգավիճակում կատարված փոփոխությունների մասին:

2. Ժամանման և վերջնական մեկնումի մասին ծանուցումը պետք է կատարվի հնարավորին չափ ժամանակին:

3. Ընդունող պետության իրավասու մարմինները համապատասխան վկաներ են տալիս հյուպատոսական հիմնարկի աշխատողներին և նրանց ընտանիքի անդամներին:

## Հոդված 6

### Հյուպատոսական պաշտոնատար անձանց քաղաքացիությունը

Հյուպատոսական պաշտոնատար անձ կարող է լինել միայն ներկայացվող պետության քաղաքացին, սակայն նա չպետք է լինի ընդունող պետությունում մշտական բնակվող անձ:

## Հոդված 7

### "PERSONA NON GRATA" հայտարարված անձինք

1. Ընդունող պետությունը կարող է դիվանագիտական ուղիներով ցանկացած ժամանակ ներկայացվող պետությանը ծանուցել այն մասին, որ այս կամ այն հյուպատոսական պաշտոնատար անձը անցանկալի է կամ որ հյուպատոսական անձնակազմի ցանկացած աշխատող անընդունելի է: Այդ դեպքում ներկայացվող պետությունը պետք է համապատասխանաբար ետ կանչի այդ անձին կամ դադարեցնի նրա գործունեությունների կատարումը հյուպատոսական հիմնարկում:

2. Եթե ներկայացվող պետությունը հրաժարվի կատարել կամ խելամիտ ժամանակամիջոցում չկատարի սույն հոդվածի 1 կետում նախատեսված իր պարտականությունները, ընդունող պետությունը կարող է համապատասխանաբար չեղյալ հայտարարել տվյալ անձի էկզեկվատուրան կամ այլ որոշումը կամ էլ դադարի նրան հյուպատոսական անձնակազմի աշխատող համարելուց:

3. Որպես հյուպատոսական հիմնարկի աշխատող նշանակված անձը կարող է անընդունելի հայտարարվել նախքան ընդունող պետության տարածքը ժամանելը կամ, եթե նա արդեն ընդունող պետությունում է գտնվում, ապա նախքան հյուպատոսական հիմնարկում իր պարտականությունների կատարմանն անցնելը: Ցանկացած այդպիսի պարագայում ներկայացվող պետությունը չեղյալ է հայտարարում նրա նշանակումը:

4. Սույն հոդվածի 1 և 3 կետերում հիշատակված դեպքերում ընդունող պետությունը հարտավոր չէ իր որոշման շարժառիթները հաղորդել ներկայացվող պետությանը:

## Հոդված 8

## Հյուպատոսական և բնակելի շենքեր ձեռք բերելը

1. Ներկայացվող պետությունն իրավունք ունի իր անունից կամ իր կողմից լիազորված ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի միջոցով, ընդունող պետության օրենքներին ու կանոններին համապատասխան և այդ պետության համաձայնությամբ, որպես սեփականություն ձեռք բերել, օգտագործելու համար ստանալ, վարձակալել կամ ցանկացած որևէ ձևով տեր դառնալ.

ա/ հյուպատոսական շենքեր, հյուպատոսական հիմնարկի ղեկավարի նստավայրը, ինչպես նաև բնակելի շենք ցանկացած հյուպատոսական պաշտոնատար անձի, հյուպատոսական հիմնարկի աշխատակցի և սպասարկող անձնակազմի աշխատողի համար, որը ընդունող պետության քաղաքացի չէ կամ այդ պետությունում մշտական բնակավայր չունի,

բ/ այդպիսի ցանկացած հյուպատոսական կամ բնակելի շենքերի կառուցման համար նախատեսված հողամաս:

2. Սույն հոդվածի 1 կետում հիշատակված պայմաններին համապատասխան՝ ներկայացվող պետությունը կարող է նաև քարելավել այդպիսի հյուպատոսական ու բնակելի շենքերը կամ հողամասը:

3. Ընդունող պետությունը, սույն հոդվածի 1 և 2 կետերում նշված իրավունքներն իրականացնելիս, անհրաժեշտության դեպքում համապատասխան օգնություն և աջակցություն է ցույց տալիս ներկայացվող պետությանը:

4. Սույն հոդվածում ոչինչ չպետք է մեկնաբանել որպես ներկայացվող պետությունը ընդունող պետության՝ շենքերի տեղանքն ու կառուցվածքը կարգավորող օրենքներն ու կանոնները, ինչպես նաև քաղաքային պլանավորումը, շրջանայացումն ու հողօգտագործումը կարգավորող օրենքներն ու կանոնները պահպանելու պատասխանատվությունից ազատող:

## Հոդված 9

### Հյուպատոսական հիմնարկի կողմից իր պարտականությունների կատարման համար պայմաններ ապահովելը

Ընդունող պետությունը բոլոր հնարավորությունները տալիս է, որպեսզի հյուպատոսական հիմնարկը կատարի իր պարտականությունները: Նա հյուպատոսական հիմնարկի աշխատողների համար ապահովում է իր պաշտպանությունը և բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկում է որպեսզի հյուպատոսական հիմնարկի աշխատողները կարողանան կատարել իրենց պարտավորությունները և, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, օգտվել արտոնություններից և իմունիտետներից:

## Հոդված 10

### Պետական դրոշակն ու զինանշանը

1. Ներկայացվող պետությունը, սույն հոդվածի դրույթներին համապատասխան, իրավունք ունի ընդունող պետությունում օգտվելու իր պետական դրոշակից ու զինանշանից:

2. Ներկայացվող պետության պետական դրոշակը կարող է կախվել և նրա պետական զինանշանը ամրացվել հյուպատոսական հիմնարկի զբաղեցրած շենքի վրա՝ նրա մուտքի դռների վերևում, ինչպես նաև հյուպատոսական հիմնարկի ղեկավարի նստավայրում և, երբ դա կապված է ծառայողական պարտականությունների կատարման հետ, նրա երթևեկության միջոցների վրա:

3. Ներկայացվող պետությունը, սույն հոդվածում նախատեսված իրավունքներն իրականացնելիս, ուշադրություն է դարձնում ընդունող պետության օրենքները, կանոններն ու սովորությունները:

## Հոդված 11

### Հյուպատոսական շենքերի և հյուպատոսական պաշտոնատար անձանց բնակելի շենքերի անձեռնմխելիությունը

1. Հյուպատոսական շենքերն անձեռնմխելի են սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Ընդունող պետության իշխանությունները չեն կարող մտնել հյուպատոսական շենքերի այն մասը, որը բացառապես օգտագործվում է հյուպատոսական հիմնարկի աշխատանքի համար, եթե դեպքում՝ միայն հյուպատոսական հիմնարկի ղեկավարի, պետության դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի կամ նրանցից մեկի կողմից նշանակված անձի համաձայնությամբ: Եթե չլինի սույն կետում հիշատակված անձանց ուղղակի մերժումը, ապա պաշտպանության անհապաղ միջոցառումներ պահանջող հրդեհի կամ մեկ այլ տարերային աղետի դեպքում ընդունող պետության իշխանությունները կարող են մուտք գործել հյուպատոսական շենքերը:

3. Սույն հոդվածի 2 կետի դրույթները պահպանելու պայմանով ընդունող պետության վրա ընկած է այլևայլ ներխուժումներից կամ վնաս հասցնելուց հյուպատոսական շենքերը պաշտպանելու համար և հյուպատոսական հիմնարկի անդորրի ամեն մի խանգարումը կամ նրա արժանապատվության վիրավորումը կանխելու համար բոլոր հարկ եղած միջոցները ձեռնարկելու հատուկ պարտականությունը:

4. Հյուպատոսական շենքերը, նրանց կահավորանքի իրերը, հյուպատոսական հիմնարկի գույքը, ինչպես նաև նրա երթևեկության միջոցները ընդունող պետության պետական պաշտպանության նպատակով կամ նրա հասարակական կարիքների համար բոլոր տեսակի բռնագրավումների հարցում օգտվում են իմունիտետից:

5. Սույն հոդվածի 1, 2 և 3 կետերի դրույթը տարածվում է նաև հյուպատոսական պաշտոնատար անձանց բնակելի շենքերի վրա:

## Հոդված 12

### Հյուպատոսական արխիվի և փաստաթղթերի անձեռնմխելիությունը

Հյուպատոսական արխիվներն ու հյուպատոսական փաստաթղթերը անձեռնմխելի են ցանկացած ժամանակ և անկախ նրանց գտնվելու տեղից

## Հոդված 13

### Հյուպատոսական շենքերը հարկերից ազատելը

1. Հյուպատոսական շենքերը և հյուպատոսական հիմնարկի ղեկավարի նստավայրը, որոնց տերը կամ վարձակալը ներկայացվող պետությունն է կամ նրա անունից գործող որևէ անձ, ազատվում են պետական, շրջանային կամ մունիցիպալ բոլոր հարկերից, գանձումներից ու մաքսերից, բացառությամբ նրանց, որոնք սպասարկման կոնկրետ տեսակների համար վարձավճար են պահանջում:

2. Սույն հոդվածի 1 կետում նշված հարկային պահումները չեն տարածվում այն հարկերի, գանձումների ու մաքսատուրքերի վրա, որոնցով, ըստ ընդունող պետության օրենքների ու կանոնների, հարկվում են ներկայացվող պետության կամ նրա անունից գործող անձի հետ պայմանագիր կնքած անձինք:

## Հոդված 14

### Տեղաշարժվելու ազատությունը

Քանի որ դա չի հակասում ընդունող պետության այն գոտիների մասին օրենքներին ու կանոններին, որտեղ մուտք գործելն արգելվում է կամ կարգավորվում պետական անվտանգության նկատառումներով, ընդունող պետությունը հյուպատոսական հիմնարկի բոլոր աշխատողների համար ապահովում է իր տարածքում տեղաշարժվելու և ուղևորություն կատարելու ազատությունը:

## Հոդված 15

### Հարաբերությունների ազատությունը

1. Ընդունող պետությունը պետք է բոլոր պաշտոնական նպատակների համար թույլատրի և պահպանի հյուպատոսական հիմնարկի հարաբերությունների ազատությունը: Ներկայացվող պետության կառավարության, դիվանագիտական ներկայացուցչությունների և մյուս հյուպատոսական հիմնարկների հետ հարաբերվելիս, որտեղ էլ որ դրանք գտնվելիս լինեն, հյուպատոսական հիմնարկը կարող է օգտվել բոլոր հարմար միջոցներից, ներառյալ դիվանագիտական ու հյուպատոսական սուրհանդակներին, դիվանագիտական ու հյուպատոսական վալիզները /փոստապարկ/ և կոդավորված կամ ծածկագրված հեռագրերը: Սակայն հյուպատոսական հիմնարկը ռադիոընդունիչ տեղադրել և դրանից օգտվել կարող է միայն ընդունող պետության համաձայնությամբ:

2. Հյուպատոսական հիմնարկի պաշտոնական գրագրությունները անձեռնմխելի են: Պաշտոնական գրագրության տակ հասկացվում է հյուպատոսական հիմնարկին և նրա պարտականություններին վերաբերող ամբողջ թղթակցությունը:

3. Հյուպատոսական վալիզը կազմող բոլոր տեղերը պետք է ունենան դրանց բնույթը նշող տեսանելի արտաքին նշաններ և կարող են պարունակել միայն պաշտոնական գրագրություններ ու փաստաթղթեր կամ բացառապես պաշտոնական օգտագործման համար նախատեսված առարկաներ:

4. Հյուպատոսական վալիզը ենթակա չէ ոչ բացելու, ոչ էլ կալանելու, սակայն այն դեպքում, երբ ընդունող պետության իրավասու իշխանությունները լուրջ հիմքեր ունեն ենթադրելու, որ սույն հոդվածի 3 կետում թվարկված թղթակցությունից, փաստաթղթերից կամ առարկաներից բացի, ինչ-որ մեկ ուրիշ բան է պարունակվում, նրանք կարող են պահանջել, որպեսզի վալիզը իրենց ներկայությամբ բացի ներկայացվող պետության լիազոր ներկայացուցիչը: Այն դեպքում, եթե ներկայացվող պետության իշխանությունները հրաժարվեն այդ պահանջը կատարելուց, վալիզը կվերադարձվի այնտեղ, որտեղից այն ուղարկվել է:

5. Հյուպատոսական սուրհանդակին արվում է պաշտոնական փաստաթուղթ, որտեղ նշվում են նրա կարգավիճակն ու տեղերի թվաքանակը, որոնք հյուպատոսական վալիզն են կազմում: Բացառությամբ այն դեպքերի, երբ ընդունող պետության համաձայնությունը կա, նա չի կարող լինել ոչ ընդունող պետության քաղաքացի, ոչ էլ, եթե նա ներկայացվող պետության քաղաքացի չէ, ընդունող պետությունում մշտական բնակվող անձ: Իր պարտականությունները կատարելիս նա զտնվում է ընդունող պետության պաշտպանության տակ, օգտվում է անձնական անձեռնմխելիությունից և ենթակա չէ ոչ ձեռնարկության ոչ էլ որևէ ձևով կալանման:

6. Ներկայացվող պետությունը, նրա դիվանագիտական ներկայացուցչությունները ու հյուպատոսական հիմնարկները կարող են նշանակել հյուպատոսական հատուկ սուրհանդակներ: Այդպիսի դեպքերում նույնպես կիրառվում են սույն հոդվածի 5 կետի դրույթները, այն բացառությամբ, որ նրանում հիշատակված իմունիտետները դադարեցվում են այն պահից, երբ այդպիսի սուրհանդակն իրեն վստահված հյուպատոսական վալիզը նշանակված վայրը կհասցնի:

7. Հյուպատոսական վալիզը կարող է վստահվել այն նավհանգիստ կամ օդանավակայանը մեկնող նավի կամ քաղաքացիական ինքնաթիռի հրամանատարին, որտեղ թույլատրված է ժամանել: Նրան տրվում է պաշտոնական փաստաթուղթ՝ նշելով վալիզը կազմող տեղերի թիվը, բայց նա հյուպատոսական սուրհանդակ չի համարվում: Տեղակն իրավասու մարմինների համաձայնությամբ՝ հյուպատոսական հիմնարկը կարող է իր աշխատողներից մեկին ուղարկել անմիջականորեն և անարգել վալիզն

ընդունելու նավի կամ ինքնաթիռի հրամանատարից, ինչպես նաև նրան այդպիսի վալիզ հանձնելու:

## Հոդված 16

### Հյուպատոսական պաշտոնատար անձանց անձնական անձեռնմխելիությունը

1. Հյուպատոսական պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի անդամներն օգտվում են անձնական անձեռնմխելիությունից: Նրանք ենթակա չեն ձերբակալման կամ որևէ ձևով կալանման:

2. Ընդունող պետությունը հյուպատոսական պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամներին վերաբերվում է պատշաճ հարգանքով և բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկում է նրանց անձնական ազատության և արժանապատվության նկատմամբ որևէ ոտնձգություն կանխելու համար:

## Հոդված 17

### Իրավաբանական անձեռնմխելիություն

1. Հյուպատոսական պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի անդամները ընդունող պետությունում օգտվում են քրեական, քաղաքացիական և վարչական իմունիտետից, բացի հետևյալ քաղաքացիական հայցերից.

1/ որոնք բխում են հյուպատոսական պաշտոնատար անձանց կնքած պայմանագրերից, որոնցով նրանք ուղղակի կամ անուղղակի պարտավորություններ չեն ստանձնել որպես ներկայացվող պետության գործակալներ,

2/ երրորդ կողմի հայցը այն վնասի համար, որ հասցրել է մոտակայքում գտնվող տրանսպորտային միջոցի, նավի կամ ինքնաթիռի հարուցած դժբախտ դեպքը:

2. Հյուպատոսական հիմնարկի աշխատակիցներն ու սպասարկող անձնակազմի աշխատողները ենթակա չեն ընդունող պետության քրեական, քաղաքացիական ու վարչական իրավասությանը այն բանում, ինչ

վերաբերում է նրանց ծառայողական գործունեությանը, բացառությամբ սույն հոդվածի 1 կետի 1 և 2 ենթակետերում շարադրված քաղաքացիական հայցերի:

## Հոդված 18

### Վկայի ցուցմունքները

1. Հյուպատոսական պաշտոնատար անձը պարտավոր է ցուցմունքներ տալու որպես վկայի:

2. Հյուպատոսական հիմնարկի աշխատակիցն ու հյուպատոսական հիմնարկի սպասարկող անձնակազմի աշխատողը կարող են որպես վկաներ կանչվել ցուցմունքներ տալու ընդունող պետության դատարանների կամ մյուս իրավասու իշխանությունների առջև: Նրանք կարող են հրաժարվել ծառայողական գործունեությանը վերաբերող հանգամանքների մասին վկայի ցուցմունքներ տալուց:

Այնուամենայնիվ բոլոր դեպքերում, հյուպատոսական հիմնարկի սպասարկող անձնակազմի աշխատողի նկատմամբ որևէ հարկադիր միջոց ձեռնարկելն անթույլատրելի է:

3. Ընդունող պետության իրավասու իշխանությունները, որոնց հարկավոր է հյուպատոսական հիմնարկի որևէ աշխատակցի կամ սպասարկող անձնակազմի աշխատողի ցուցմունքը, պետք է խուսափեն նրանց ծառայողական պարտականությունների կատարմանը խոչընդոտ հարուցելուց: Նրանք կարող են, երբ դա հնարավոր է, այդ աշխատակցից կամ սպասարկող անձնակազմի աշխատողից այդ ցուցմունքներն ստանալ հյուպատոսական շենքում կամ նրա տանը կամ էլ նրանից գրավոր վերցնել ցուցմունքները:

## Հոդված 19

### Արտոնությունների և իմունիտետների մերժումը

1. Ներկայացվող պետությունը կարող է մերժել հյուպատոսական հիմնարկի աշխատողների և նրանց ընտանիքի անդամների ցանկացած

արտոնություններն ու իմունիտետները, որ նախատեսված են 16, 17 և 18 հոդվածներում:

2. Բացառությամբ սույն հոդվածի 3 կետում նախատեսված դեպքի, այդպիսի մերժումը միշտ պետք է լինի որոշակիորեն արտահայտված և այդ մասին պետք է գրավոր հաղորդվի ընդունող պետությանը:

3. Հյուպատոսական հիմնարկի աշխատողի կողմից գործի հարուցումը, այն դեպքում, երբ նա, 17 հոդվածի համաձայն, կարող էր օգտվել իրավական անձեռնմխելիությունից, նրան զրկում է հիմնական հայցի հետ անմիջականորեն կապված որևէ հանդիպման հայցի նկատմամբ իրավական անձեռնմխելիությունը վկայակոչելու իրավունքից:

4. Քաղաքացիական կամ վարչական գործի նկատմամբ իրավական իմունիտետի մերժելը չի նշանակում մերժել դատական վճռի արդյունք հանդիսացող գործադիր գործողությունների իմունիտետը. այդպիսի գործողությունների նկատմամբ առանձին մերժում է հարկավոր:

## Հոդված 20

### Ազատումն օտարերկրացիներին գրանցելուց և բնակության համար թույլտվություն ստանալուց

Հյուպատոսական պաշտոնատար անձինք, հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներն ու նրանց ընտանիքի անդամներն ազատվում են օտարերկրացիներին գրանցելու նկատմամբ ընդունող պետության օրենքներով ու կանոններով նախատեսված բոլոր պարտավորություններից և բնակության համար թույլտվություն ստանալուց:

## Հոդված 21

### Ազատումն աշխատանքի համար թույլտվություն ստանալուց

1. Հյուպատոսական հիմնարկի աշխատողները այն բանում, ինչը ներկայացվող պետության համար աշխատանք կատարելուն է վերաբերում, ազատվում են աշխատանքի համար թույլտվություն ստանալուն հետ

կապված բոլոր պարտավորություններից, որոնք սահմանված են օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու վերաբերյալ ընդունող պետության օրենքներով ու կանոններով:

2. Հյուպատոսական պաշտոնատար անձանց և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցների մասնավոր տնային աշխատողները, եթե նրանք եկամուտ ստանալու նպատակով որևէ այլ գործունեությամբ չեն զբաղվում ընդունող պետությունում, ազատվում են այն պարտականություններից, որոնց մասին խոսվում է սույն հոդվածի 1 կետում:

## Հոդված 22

### Սոցիալական ապահովությանը վերաբերող պահում

1. Բացառությամբ սույն հոդվածի 3 կետում նախատեսված դեպքերի, ընդունող պետությունում գործող սոցիալական ապահովության վերաբերյալ որոշումները հյուպատոսական հիմնարկի աշխատողների և նրանց ընտանիքի անդամների վրա չեն տարածվում այն բանում, ինչը վերաբերում է ներկայացվող պետության համար նրանց կատարած աշխատանքին:

2. Սույն հոդվածի 1 կետում նախատեսված պահումը տարածվում է նաև մասնավոր տնային աշխատողների վրա, որոնք բացառապես զտնվում են հյուպատոսական հիմնարկի աշխատողների մոտ ծառայության մեջ, պայմանով.

1/ որ նրանք ընդունող պետության քաղաքացիներ չեն և այնտեղ մշտական չեն բնակվում, և

2/ որ նրանց վրա տարածվում են ներկայացվող պետությունում կամ երրորդ պետությունում գործող սոցիալական ապահովության վերաբերյալ կանոնները:

3. Հյուպատոսական հիմնարկի աշխատողները, որոնք վարձում են այնպիսի անձանց, որոնց վրա չեն տարածվում սույն հոդվածի 2 կետում նախատեսված պահումները, պետք է կատարեն ընդունող պետությունում գործող սոցիալական ապահովության վերաբերյալ որոշումներով վարձակալների վրա դրվող պարտավորությունները:

4. Սույն հոդվածի 1 և 2 կետերում նախատեսված պահումները չեն խանգարում ընդունող պետությունում սոցիալական ապահովության համակարգին կամավոր մասնակցությանը, այնքանով, որ այդպիսի մասնակցությունը թույլատրվում է այդ պետության կողմից:

## Հոդված 23

## Հարկային պահումներ

1. Հյուպատոսական պաշտոնատար անձինք և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցները, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները ազատվում են պետական, շրջանային և մունիցիպալ բոլոր հարկերից, գանձումներից ու մաքսերից՝ անձնական ու գույքային, բացառությամբ.

1/ անուղղակի հարկերի, որոնք սովորաբար մտցվում են ապրանքների կամ ապասարկման արժեքի մեջ,

2/ ընդունող պետության տարածքում գտնվող մասնավոր անշարժ գույքի համար գանձումներից ու հարկերից՝ 13 հոդվածի դրույթներում նախատեսված պահումներով,

3/ ժառանգական գույքի հարկերի կամ ժառանգելու մաքսատուրքերի կամ գույքի մեկից մյուսին անցնելու հարկերի, որ գանձում է ընդունող պետությունը՝ 25 հոդվածի 2 կետի դրույթներում նախատեսված պահումներով,

4/ մասնավոր եկամտի հարկերի ու գանձումների, ներառյալ այն կապիտալից ստացվող եկամուտները, որի աղբյուրը ընդունող պետությունում է գտնվում, և ընդունող պետությունում առևտրային կամ ֆինանսական ձեռնարկություններում կապիտալ ներդրումների հարկերի,

5/ ապասարկման կոնկրետ տեսակների համար գանձվող հարկերի,

6/ գրանցման, դատական և ցուցակային մաքսատուրքերի, իրավասության /անշարժ գույքի գրավադրություն/ գանձումների, դրոշմատուրքերի՝ 13 հոդվածի դրույթներում նախատեսված պահումներով:

2. Սպասարկող անձնակազմի աշխատողներն ազատվում են հյուպատոսական հիմնարկում իրենց կատարած աշխատանքի համար աշխատավարձի վրա դրվող ընդունող պետության հարկերից, գանձումներից ու մաքսատուրքերից:

3. Հյուպատոսական հարկերի աշխատողները, որոնք այնպիսի անձանց են վարձում, որոնց աշխատավարձը ընդունող պետությունում ազատված չէ եկամտահարկից, կատարում են այդ պետության օրենքներով ու կանոններով վարձակալների վրա դրվող պարտավորություններն այն բանում, ինչը եկամտահարկի գանձմանն է վերաբերում:

## Հոդված 24

### Ազատումն մաքսատուրքերից և գննումից

1. Ընդունող պետությունը, նրանում ընդունված օրենքներն ու կանոններին համապատասխան, թույլատրում է ներկրել և ազատում է բոլոր մաքսատուրքերից, հարկերից ու դրա հետ կապված գանձումներից, բացառությամբ պահման, տեղափոխման և այդօրինակ ծառայությունների համար գանձումների.

1/ հյուպատոսական հիմնարկի պաշտոնական օգտագործման համար նախատեսված իրերը,

2/ հյուպատոսական պաշտոնատար անձի կամ նրա ընտանիքի անդամների անձնական օգտագործման համար նախատեսված իրերը, ներառյալ նրա հարմարակեցության համար նախատեսված իրերը: Սպառողական ապրանքների քանակը չպետք է գերազանցի համապատասխան անձանց կողմից անմիջական սպառման համար անհրաժեշտ քանակը:

2. Հյուպատոսական հիմնարկի աշխատակիցները սույն հոդվածի 1 կետում նախատեսված արտոնություններից և ազատումներից օգտվում են այն իրերի նկատմամբ, որ ներկրել են իրենց սկզբնական հարմարակեցության ստեղծման ժամանակ:

3. Հյուպատոսական պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի այն անդամների անձնական ուղեբեռը, որը մեկնում է այդ անձանց հետ, ազատվում է զննումից: Այն կարող է զննվել միայն այն դեպքում, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրանում պարունակվում են այլ առարկաներ, քան այդ նշված է սույն հոդվածի 1 կետի 2 ենթակետում, կամ էլ առարկաներ, որոնց ներկրումն ու դուրսբերումը արգելված է ընդունող պետության օրենքներով ու կանոններով կամ որոնք ընկնում են նրա կարանտինային օրենքների ու կանոնների տակ: Այդպիսի զննումը պետք է կատարվի հյուպատոսական համապատասխան պաշտոնատար անձի կամ նրա ընտանիքի անդամի ներկայությամբ:

## Հոդված 25

### Հյուպատոսական հիմնարկի աշխատողների և նրանց ընտանիքի անդամների ժառանգական գույքը

Հյուպատոսական հիմնարկի աշխատողի կամ նրա ընտանիքի անդամի մահվան դեպքում ընդունող պետությունը.

1/ թույլատրում է դուրս բերել մահացածի շարժական գույքը, բացառությամբ այն գույքը, որը ձեռք է բերված ընդունող պետությունում և որի դուրս բերումը արգելված է եղել նրա մահվան պահին:

2/ պետական, շրջանային կամ մունիցիպալ ոչ մի հարկ չի գանձվում ժառանգության համար կամ այն շարժական գույքը ժառանգելու համար, որը ընդունող պետությունում է գտնվում բացառապես այն կապակցությամբ, որ մահացած անձը որպես հյուպատոսական աշխատողի կամ նրա ընտանիքի անդամի՝ այդ պետությունում է գտնվում:

## Հոդված 26

### Անձնական պարտքերից և հարկումներից ազատելը

Ընդունող պետությունը պարտավոր է հյուպատոսական հիմնարկի

աշխատողներին և նրանց ընտանիքի անդամներին ազատել աշխատանքային ու պետական բոլոր պարտքերից, անկախ դրանց բնույթից, ինչպես նաև զինծառայության պարտքերից, ինչպիսիք են բռնագրավումը, ռազմատուգանքը, զինվորական օգնությունը:

## Հոդված 27

### Հյուպատոսական արտոնությունների և իմունիտետների սկիզբն ու վերջը

1. Հյուպատոսական հիմնարկի յուրաքանչյուր աշխատող սույն կոնվենցիայում նախատեսված արտոնություններից և իմունիտետներից օգտվում է ընդունող պետության տարածքը մուտք գործելու պահից՝ իր նշանակման վայրը մեկնելիս, կամ, եթե նա այդ տարածքում է գտնվում, այն պահից, երբ նա անցել է իր պարտականությունների կատարմանը:

2. Հյուպատոսական հիմնարկի աշխատողի ընտանիքի անդամները և նրա մասնավոր տնային աշխատողները սույն Կոնվենցիայում նախատեսված արտոնություններից և իմունիտետներից օգտվում են սույն հոդվածի 1 կետին համապատասխան նրանց արտոնություններ և իմունիտետներ տալու պահից կամ ընդունող պետության տարածքը նրանց մուտք գործելու պահից, կամ էլ այն պահից, երբ նրանք դարձել են նրա ընտանիքի անդամներ կամ նրա մասնավոր տնային աշխատողներ, նայած, թե ինչն է ավելի ուշ կատարվել:

3. Երբ հյուպատոսական հիմնարկի աշխատողի պարտականությունները դադարեցվում են՝ նրա արտոնություններն ու իմունիտետները, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների կամ նրա մասնավոր տնային աշխատողի արտոնություններն ու իմունիտետները սովորաբար դադարեցվում են այն պահին, երբ տվյալ անձը հեռանում է ընդունող պետությունից, կամ խելամիտ ժամկետը լրանալիս, որպեսզի այդ բանն անի, կախված այն բանից, թե այդ պահերից որը շուտ վրա կհասնի, բայց մինչ այդ պահը դրանք շարունակում են գոյություն ունենալ, նույնիսկ զինված բախման դեպքում: Ինչ վերաբերում է սույն հոդվածի 2 կետում հիշատակված անձանց, նրանց արտոնություններն ու իմունիտետնե-

ը դադարեցվում են այն ժամանակ, երբ նրանք դադարում են հյուսպատասական հիմնարկի աշխատողի ընտանիքի անդամները լինելուց, կամ հեռանում են նրա մոտ ծառայելուց, սակայն վերապահումով, որ եթե այդպիսի անձինք մտադիր են խելամիտ ժամկետի ընթացքում հեռանալ ընդունող պետությունից, ապա նրանց արտոնություններն ու իմունիտետները պահպանվում են մինչև նրանց մեկնելու պահը:

4. Սակայն իրենց պարտականությունները կատարելիս հյուսպատասական պաշտոնատար անձի կամ հյուսպատասական հիմնարկի աշխատակցի կողմից արված գործողությունների նկատմամբ իրավական իմունիտետը շարունակում է գոյություն ունենալ առանց որևէ ժամկետով սահմանափակվելու:

5. Հյուսպատասական հիմնարկի աշխատողի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամները շարունակում են իրենց տրված արտոնություններից և իմունիտետներից օգտվել մինչև այն պահը, երբ նրանք կհեռանան ընդունող պետությունից կամ մինչև ընդունող պետությունից հեռանալու համար խելամիտ ժամկետի լրանալը՝ նայած թե այդ պահերից որ մեկն ավելի շուտ վրա կհասնի:

## Հոդված 28

### Ընդունող պետության օրենքների ու կանոնների հարգումը

1. Արտոնություններից և իմունիտետներից օգտվող բոլոր անձինք պարտավոր են առանց իրենց արտոնությունների և իմունիտետների համար վնասի հարգել ընդունող պետության օրենքներն ու կանոնները: Նրանք պարտավոր են նաև չմիջամտել այդ պետության ներքին գործերին:

2. Հյուսպատասական հիմնարկները չպետք է օգտագործվեն հյուսպատասական պարտականությունների կատարման հետ անհամատեղելի նպատակներով:

3. Սույն հոդվածի 2 կետի դրույթները չեն բացառում շենքի այն մասում գրասենյակներ և ուրիշ մարմիններ կամ հիմնարկներ տեղավորելու հնարավորությունը, որտեղ հյուսպատասական սենյակներն են գտնվում, պայմանով, որ այդպիսի գրասենյակներին հատ-

կացված սենյակները կանջատվեն այն սենյակներից, որոնցից հյուպատոսական հիմնարկն է օգտվում: Այդ դեպքում հիշյալ գրասենյակները, սույն Կոնվենցիայի համաձայն, հյուպատոսական սենյակների մասը չեն հանդիսանում:

4. Հյուպատոսական հիմնարկի աշխատողները պետք է պահպանեն ընդունող պետության օրենքներով ու կանոններով նախատեսվող բոլոր պահանջները այն վնասից ապահովվելու նկատմամբ, որը կարող է երրորդ անձանց պատճառվել ցանկացած ճանապարհատրանսպորտային միջոց, նավ կամ օդանավ օգտագործելու կապակցությամբ:

5. Հյուպատոսական հիմնարկի աշխատողները չպետք է անձնական եկամուտ ստանալու նպատակով որևէ մասնագիտական կամ առևտրային գործունեությամբ զբաղվեն ընդունող պետությունում:

## Հոդված 29

### Արտոնություններից և իմունիտետներից չօգտվող անձինք

1. Հյուպատոսական հիմնարկի աշխատակիցներն ու հյուպատոսական հիմնարկի ապասարկող անձնակազմի աշխատողները սույն Կոնվենցիայի դրույթներով նախատեսված արտոնություններից և իմունիտետներից չեն օգտվում, եթե նրանք ընդունող պետության քաղաքացիներ են կամ մշտական բնակիչներ, բացառությամբ 18 հոդվածի 2-րդ կետում նախատեսվող դեպքերի:

2. Հյուպատոսական հիմնարկի աշխատողների ընտանիքի անդամները արտոնություններից և իմունիտետներից չեն օգտվում այն դեպքում, եթե հիշյալ անձինք ընդունող պետության քաղաքացիներ են կամ մշտական բնակվում են այնտեղ:

3. Մասնավոր տնային աշխատողը չի օգտվում սույն Կոնվենցիայի դրույթներով նախատեսված արտոնություններից և իմունիտետներից:

4. Ընդունող պետությունը, սակայն, պետք է այդ անձանց նկատմամբ իր իրավասությունն օգտագործի այնպես, որպեսզի անհարկավոր խոչընդոտներ չստեղծի հյուպատոսական հիմնարկի գործունեությունների կատարման համար:

## Հոդված 30

### Հյուպատոսական պաշտոնատար անձանց պարտականությունները

Հյուպատոսական պաշտոնատար անձանց պարտականություններն են.

1/ ներկայացվող պետության և նրա քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանությունը, ինչպես նաև ներկայացվող պետության քաղաքացիներին օգնություն ցուցաբերելը:

2/ ներկայացվող պետության և ընդունող պետության միջև հարաբերությունների զարգացմանն աջակցելը առևտրային, տնտեսական, մշակութային, մարզական, գիտատեխնիկական, զբոսաշրջության և այլ բնագավառներում,

3/ ընդունող պետությունում քաղաքական, առևտրային, տնտեսական, մշակութային, մարզական, գիտատեխնիկական և այլ բնագավառներում տիրող դրությունը բոլոր օրինական միջոցներով պարզելը և այդ մասին ներկայացվող պետության կառավարությանը հաղորդելը,

4/ ներկայացվող պետության կողմից թույլատրված մյուս պարտականությունների կատարումը, որոնք չեն արգելվում ընդունող պետության օրենքներով ու կանոններով կամ որոնց կատարման դեմ ընդունող պետությունը առարկություններ չունի:

## Հոդված 31

### Քաղաքացիության հարցերով և քաղաքացիական կացության ակտերի գրանցման հարցերով պարտականություններ

1. Հյուպատոսական պաշտոնատար անձը իրավունք ունի

1/ ներկայացվող պետության օրենքներին համապատասխան ընդունելու քաղաքացիական հարցերով միջնորդություններ,

2/ կատարելու ներկայացվող պետության քաղաքացիների հաշվառում,

3/ գրանցելու ներկայացվող պետության քաղաքացիների ծնունդն ու մահը և համապատասխան վկայականներ տալու ներկայացվող պետության օրենսդրության համաձայն, պայմանով, որ դա չի հակասում ընդունող պետության օրենսդրությանը,

4/ ներկայացվող պետության օրենսդրությանը համապատասխան և, եթե դա չի հակասում ընդունող պետության օրենսդրությանը, գրանցելու ամուսնությունները /պայմանով, որ ամուսնացող երկու անձինք ներկայացվող պետության քաղաքացիներ են/ և ամուսնության վկայական տալ:

2 Սույն հոդվածի 1 կետի դրույթները շահագրգռված անձանց չեն զրկում ընդունող պետության օրենքներն ու կանոնները պահպանելու պարտականությունից:

## Հոդված 32

### Անձնագրեր և վիզաներ տալը

Հյուպատոսական պաշտոնատար անձը իրավունք ունի տալու, երկարացնելու, անվավեր համարելու, վերցնելու կամ ժամանակավորապես պահելու անձնագրերն ու ուղեգնացության մյուս փաստաթղթերը ներկայացվող պետության քաղաքացիների, և տալու, երկարացնելու կամ անվավեր համարելու այն անձանց վիզաները կամ համապատասխան փաստաթղթերը, ովքեր կամենում են ներկայացվող պետություն մեկնել, ինչպես նաև իրավունք ունի փոփոխություններ մտցնելու այդ բոլոր փաստաթղթերի մեջ:

## Հոդված 33

### Նոտարական վավերացումն ու լեգալացումը /օրինականացումը/

1- Ներկայացվող պետության օրենքներին ու կանոններին համապատասխան հյուպատոսական պաշտոնատար անձն իրավունք ունի

1/ ցանկացած անձի խնդրանքով, անկախ նրա քաղաքացիությունից նրան տալու ներկայացվող պետությունում օգտագործելու համար հարկավոր զանազան փաստաթղթեր,

2/ ներկայացվող պետության քաղաքացիների խնդրանքով նրանց տալու ընդունող պետությունում կամ նրա սահմաններից դուրս օգտագործելու համար հարկավոր զանազան փաստաթղթեր,

3/ ապահովել ներկայացվող պետության կամ ընդունող պետության պաշտոնական լեզվով փաստաթղթերի թարգմանությունը և հաստատել այդ թարգմանության ճշտությունը,

4/ լեգալացնել ներկայացվող պետության կամ ընդունող պետության իրավասու իշխանությունների կողմից տրված փաստաթղթերը,

5/ կազմել, հաստատել և ի պահ ընդունել ներկայացվող պետության քաղաքացիների կտակները,

6/ կազմել և հաստատել ներկայացվող պետության քաղաքացիների միջև կնքված ակտերն ու գործարքները, քանի որ այդպիսի ակտերն ու գործարքները չեն հակասում ընդունող պետության օրենսդրությանը և չեն վերաբերում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների հաստատմանը կամ փոխանցմանը, կազմել և հաստատել մի կողմից՝ ներկայացվող պետության քաղաքացիների և, մյուս կողմից՝ մյուս պետությունների քաղաքացիների միջև ակտերն ու գործարքները, քանի որ այդ ակտերն ու գործարքները բացառապես պատկանում են ներկայացվող պետությունում գույքին կամ իրավունքներին և վերաբերում են այդ պետությունում քննարկման ենթակա գործերին՝ պայմանով, որ այդ ակտերն ու գործարքները չեն հակասում ընդունող պետության օրենսդրությանը,

7/ հաստատել ներկայացվող պետության քաղաքացիների ատորագրությունները բոլոր տեսակի փաստաթղթերի վրա,

8/ ի պահ ընդունել ներկայացվող պետության քաղաքացիների գույքն ու փաստաթղթերը, քանի որ դա չի հակասում ընդունող պետության օրենսդրությանը:

2. Սույն հոդվածի 1 կետին համապատասխան հյուպատոսական պաշտոնատար անձի կողմից կազմված, հաստատված կամ թարգմանված փաստաթղթերը ընդունող պետությունում քննարկվելու են որպես նույնպիսի իրավական նշանակություն և ապացուցիչ ուժ ունեցող փաստաթղթեր, ինչպես որ եթե դրանք լինեին ընդունող պետության իրավասու իշխանությունների ու հիմնարկների կողմից կազմված, հաստատված կամ թարգմանված փաստաթղթեր, պայմանով, որ դրանք համապատասխանում են ընդունող պետության օրենսդրությանը:

Այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է ըստ ընդունող պետության օրենսդրության, փաստաթղթերը պետք է լեգալացվեն:

## Հոդված 34

### Հարաբերությունները ներկայացվող պետության քաղաքացիների հետ

1. Հյուպատոսական պաշտոնատար անձը կարող է ներկայացվող պետության քաղաքացիների հետ հանդիպել ու հարաբերվել, նրանց խորհուրդներ տալ և ամենայն աջակցություն ցուցաբերել՝ ներառյալ նրանց իրավական օգնություն ցույց տալու համար միջոցներ ձեռնարկելը:

Հյուպատոսական պաշտոնատար անձը կարող է ընդունող պետության տարածքում մշտական բնակվող կամ ժամանակավորապես գտնվող՝ ներկայացվող պետության անհայտ կորած քաղաքացիների հետախուզմանն աջակցելու համար դիմել ընդունող պետության իրավասու իշխանություններին:

Ընդունող պետությունը ամենևին չի սահմանափակում ներկայացվող պետության քաղաքացիների հարաբերումը հյուպատոսական հիմնարկի հետ և նրանց մուտքը հյուպատոսական հիմնարկ:

2. Այն դեպքում, եթե ներկայացվող պետության քաղաքացին հյուպատոսական օկրուգի շրջանակներում ձերբակալված է, բռնված կամ որևէ ձևով ազատությունից զրկված, ապա ընդունող պետության իրավասու իշխանությունները պատահածից հետո չորս օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում են հյուպատոսական հիմնարկին:

3. Հյուպատոսական պաշտոնատար անձը իրավունք ունի այցելելու ներկայացվող պետության քաղաքացուն, որը ձերբակալված է, բռնված, որևէ ձևով ազատությունից զրկված կամ իր պատիժն է կրում բանտարկության մեջ, հարաբերվել, հանդիպել նրա հետ և իրավական օգնություն ցույց տալ նրան: Ընդունող պետության իրավասու իշխանությունները հյուպատոսական պաշտոնատար անձի խնդրանքով պետք է ներկայացվող պետության հիշյալ անձի հետ հյուպատոսական պաշտոնատար անձի հանդիպումը կազմակերպեն ծանուցումից հետո երեք օրվա ընթացքում: Հետագա այցելությունները կարող են իրականացվել դրանց միջև ընկած խելամիտ ժամանակամիջոցում:

4. Ներկայացվող պետության՝ կալանման մեջ գտնվող քաղաքացու կողմից հյուպատոսական հիմնարկին հասցեագրված ամեն մի հաղորդում ընդունող պետության մարմինների կողմից անհապաղ հանձնվում է այդ

հյուպատոսական հիմնարկին:

5. Ընդունող պետության իրավասու իշխանությունները պետք է ներկայացվող պետության ծերբակալված, բռնված կամ որևէ այլ ձևով ազատությունից զրկված քաղաքացուն անհապաղ տեղեկացնեն նրա իրավունքների մասին՝ սույն հոդվածի 1 և 3 կետերի դրույթներին համապատասխան:

6. Սույն հոդվածում նախատեսված իրավունքներն իրականացվում են ընդունող պետության օրենքներին ու կանոններին համապատասխան: Սակայն Ընդունող պետության օրենքների ու կանոնների կիրառումը չպետք է սահմանափակի սույն հոդվածում նախատեսված իրավունքների իրագործումը:

## Հոդված 35

### Խնամակալություն և հոգաբարձություն

1. Ընդունող պետության իրավասու իշխանությունները իրենց մոտ տեղեկատվության առկայության դեպքում հյուպատոսական պաշտոնատար անձին ծանուցում են այն մասին, որ ներկայացվող պետության քաղաքացու համար, որը ընդունող պետության տարածքում մշտական բնակություն ունի, անհրաժեշտ է խնամակալ կամ հոգաբարձու նշանակել:

2. Հյուպատոսական պաշտոնատար անձը սույն հոդվածի 1 կետում նշված հարցով համագործակցում է ընդունող պետության իրավասու իշխանությունների հետ և իրավունք ունի խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունների կատարման համար հարմար մարդկանց երաշխավորել՝ ընդունող պետության օրենսդրությանը համապատասխան:

3. Եթե ընդունող պետության դատարանը կամ մյուս իրավասու իշխանությունները գտնեն, որ առաջարկված անձը ինչ-ինչ պատճառներով որպես խնամակալ կամ հոգաբարձու անընդունելի է, ապա հյուպատոսական պաշտոնատար անձը կարող է այլ թեկնածու առաջարկել:

## Հոդված 36

### Ներկայացվող պետության քաղաքացիներին ներկայացնելը

Եթե ներկայացվող պետության քաղաքացին չի կարող իր իրավունքների ու շահերի պաշտպանությունը ընդունող պետությունում իրականացնել ընդունող պետությունում համապատասխան օրենքների բացակայության կամ այլ պատճառներով, ապա հյուպատոսական պաշտոնատար անձը կարող է այդ քաղաքացուն առանց հատուկ լիազորության ներկայացնել ընդունող պետության դատարանում և մյուս մարմիններում կամ նրա պատշաճ ներկայացումն ապահովել այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ քաղաքացին չի նշանակել իր լիազորին կամ չի ստանձնել իր իրավունքների ու շահերի պաշտպանությունը:

## Հոդված 37

### Ժառանգական գույքի պահպանության միջոցառումներ

1. Ընդունող պետության իրավասու իշխանությունները տեղեկատվության առկայությամբ հնարավորին կարճ ժամանակամիջոցում հյուպատոսական հիմնարկին տեղեկացնում են ներկայացվող պետության քաղաքացիների՝ ընդունող պետությունում տեղի ունեցած մահվան բոլոր դեպքերի մասին և նրա խնդրանքով տալիս մահվան վկայական կամ մահվան փաստը հաստատող որևէ փաստաթղթի պատճենը:

2. Այն դեպքում, եթե ներկայացվող պետության մահացած քաղաքացին ժառանգություն է թողել ընդունող պետությունում, ապա ընդունող պետության իրավասու իշխանությունները հնարավորին կարճ ժամանակամիջոցում հյուպատոսական հիմնարկին տեղեկացնում են ժառանգական գույքի բաղկացության, ժառանգների, կտակն ստացողների, ինչպես նաև կտակի առկայության մասին:

3. Հյուպատոսական պաշտոնատար անձը կարող է ներկա լինել գույքագրացուցակի կազմմանը և ժառանգական գույքի կնքմանը, որ նշված է սույն հոդվածի 2 կետում:

4. Եթե ներկայացվող պետության որևէ քաղաքացի ստացել է ընդունող պետությունում մահացած որևէ քաղաքացիության անձի գույքը ժառանգելու կամ ստանալու իրավունք, ապա եթե նույնիսկ ներկայացվող պետության այդ քաղաքացին ընդունող պետության սահմաններից դուրս է գտնվում, ընդունող պետության իրավասու իշխանությունները, իրենց մոտ տեղեկատվության առկայությամբ, պետք է հյուպատոսական հիմնարկին ծանուցեն այն մասին, որ ներկայացվող պետության տվյալ քաղաքացին ժառանգորդն է կամ կտակն ստացողը:

5. Հյուպատոսական պաշտոնատար անձը կարող է ներկայացվող պետության քաղաքացու անունից դատարանից, մյուս իշխանություններից կամ առանձին անձից ստանալ որևէ անձի մահվան հետևանքով այդ քաղաքացուն հասնող փողը կամ այլևայլ գույքը, ներառյալ ժառանգությունը, փոխհատուցման և ապահովագրության հասնող գումարների վճարը և այդ փողերն ու գույքը հանձնել հիշյալ քաղաքացուն:

6. Ներկայացվող պետության՝ ժամանակավորապես ընդունող պետությունում գտնվող քաղաքացու մահվան դեպքում, ինչպես նաև եթե մահացածը ընդունող պետությունում չունի ազգականներ կամ իր ներկայացուցիչները, և, ի լրումն դրա, նրա թողած իրերը կապված չեն ընդունող պետությունում գտնվելու ժամանակ մահացածի ստանձնած պարտավորությունների հետ, ապա հյուպատոսական պաշտոնատար անձը իրավունք ունի ստանալու, պահպանելու և ըստ նշանակման հանձնելու թողնված իրերը:

## Հոդված 38

## Օդանավերին օգնություն ցույց տալը

1. Հյուպատոսական պաշտոնատար անձն իրավունք ունի հյուպատոսական օկրուգի սահմաններում հարկ եղած օգնությունն ու աջակցությունը ցույց տալ ներկայացվող պետության օդանավին, որը ընդունող պետության օդանավակայանում է գտնվում:

2. Հյուպատոսական պաշտոնատար անձն իրավունք ունի նավ բարձրանալ, հրամանատարի և անձնակազմի անդամների հետ հարաբերվել՝ ընդունող պետության օրենքներին ու ավանդույթներին համապատասխան:

3. Հյուպատոսական պաշտոնատար անձը կարող է դիմել ընդունող պետության իրավասու մարմիններին և նրանց պաշտպանությունը խնդրել ներկայացվող պետության օդանավին, նրա հրամանատարին, անձնակազմի անդամներին և ուղևորներին վերաբերող բոլոր հարցերի նկատմամբ իր պարտականությունների կատարման համար:

## Հոդված 39

### Հրամանատարին և անձնակազմին օգնություն ցույց տալը

1. Այն չափով, ինչ չափով որ ներքոհիշյալ գործողություններ չեն հակասում ընդունող պետության օրենքներին, հյուպատոսական պաշտոնատար անձը իր հյուպատոսական օկրուգի սահմաններում իրավունք ունի.

ա/ հետաքննելու ներկայացվող պետության ինքնաթիռին պատահած ամենայն դեպքերը, հարցաքննելու ներկայացվող պետության օդանավի հրամանատարին և անձնակազմի ցանկացած անդամին, ստուգելու օդանավի փաստաթղթերը, ընդունելու հայտարարություններ, ստանալու տեղեկություններ երթուղու և նշանակման կետի վերաբերյալ, ինչպես նաև օգնություն ցույց տալու ինքնաթիռի վայրէջքի, թռիչքի ու կանգառի կազմակերպման գործում,

բ/ լուծելու հրամանատարի և անձնակազմի անդամների միջև եղած վեճերը,

գ/ ապահովելու օդանավի հրամանատարի և անձնակազմի անդամների բուժումը բժշկական հիմնարկներում և ներկայացվող պետություն նրանց վերադառնալու միջոցներ ձեռնարկել,

դ/ ստանալու, կազմելու, երկարացնելու գործողության ժամկետը կամ վավերացնելու ցանկացած դեկլարացիա կամ մեկ ուրիշ փաստաթուղթ, ինչը նախատեսում են ներկայացվող պետության օդանավի, նրա անձնակազմի, ուղևորների կամ բեռան վերաբերյալ ներկայացվող պետության օրենքները,

ե/ ընդունել օդային հաղորդակցությունների նկատմամբ ներկայացվող պետության օրենքներն ու կանոնները կիրառելու համար այլ միջոցներ:

2. Հյուպատոսական պաշտոնատար անձը, ընդունող պետության օրենքներին ու կանոններին համապատասխան, իրավունք ունի հրամանատարին կամ անձնակազմին ցանկացած անդամին ուղեկցելու դատարանում կամ ընդունող պետության մյուս մարմիններում՝ նրանց օգնություն ցույց տալու համար:

## Հոդված 40

### Պաշտպանություն՝ ներկայացվող պետության օդանավի նկատմամբ գործադրվող հարկադրական միջոցներից

1. Այն դեպքում, եթե ընդունող պետության դատական կամ մյուս իրավասու իշխանությունները մտադիր են ներկայացվող պետության օդանավի նկատմամբ հարկադրական միջոցներ ձեռնարկել կամ օդանավում պաշտոնական հետաքննություն անցկացնել, նրանք այդ մասին նախապես ծանուցում են հյուպատոսական հիմնարկին այն բանի համար, որպեսզի հյուպատոսական պաշտոնատար անձը կամ նրա ներկայացուցիչը կարողանան ներկա գտնվել այդպիսի գործողություններն իրականացնելիս: Եթե այդ մասին հյուպատոսական հիմնարկի նախնական ծանուցումը /հարցի հրատապության նկատառումով/ ժամանակի սղության պատճառով հնարավոր չէ՝ ընդունող պետության իրավասու իշխանությունները, ձեռնարկված վերոհիշյալ գործողություններից անմիջապես հետո, ծանուցում են հյուպատոսական հիմնարկին և հյուպատոսական պաշտոնատար անձի խնդրանքով հնարավորին կարճ ժամանակի միջոցում լրիվ ինֆորմացիա տալիս այդ գործողությունների մասին:

2. Սույն հոդվածի 1 կետի դրույթները կիրառվում են նաև այն դեպքում, եթե օդանավի հրամանատարը կամ անձնակազմի անդամները ընդունող պետության իրավասու իշխանությունների կողմից կանչվում են օդանավին վերաբերող հարցերով ցուցմունքներ տալու համար:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ դա իրականացվում է ներկայացվող պետության հյուպատոսական պաշտոնատար անձի կամ անձնակազմի հրամանատարի խնդրանքով կամ թույլտվությամբ, ընդունող պետության դատական կամ մյուս իրավասու մարմինները ներկայացվող պետության օդանավում չեն միջամտում նրա ներքին գործերին, պայմանով, որ դրանով հանդերձ չեն խախտվում ընդունող պետության անդորրին ու անվտանգության ապահովմանը վերաբերող օրենքներն ու կանոնները:

4. Սույն հոդվածի դրույթները, սակայն, չեն կիրառվում մաքսային, անձնագրային կամ սանիտարական հսկողության ժամանակ, ինչպես նաև ընդունող պետության իրավասու մարմինների կողմից ձեռնարկված ցանկացած գործողությունների ժամանակ, որ կատարվել են օդանավի հրամանատարի խնդրանքով կամ համաձայնությամբ: Սույն հոդվածը չի շոշափում կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որ բխում են նրանց միջև գործող բազմակողմ պայմանագրերից:

## Հոդված 41

### Օգնություն ներկայացնող պետության վթարի ենթարկված օդանավին

1. Եթե ներկայացվող պետության օդանավը վթարի ենթարկվի ընդունող պետության տարածքում կամ ընդունող պետության իրավասու իշխանություններին հայտնի դառնա, որ ընդունող պետության տարածքում վթարի ենթարկված երրորդ պետության օդանավում եղել են ներկայացվող պետության քաղաքացիներ և նրանց գույքը, ապա ընդունող պետության իրավասու իշխանությունները այդ մասին հնարավորին կարճ ժամանակամիջոցում հայտնի են դարձնում հյուպատոսական հիմնարկին, ինչպես նաև ծան ուցում են ներկայացվող պետության օդանավը և քաղաքացիներին, ինչպես նաև նրանց գույքը փրկելու համար ձեռնարկված միջոցների մասին:

2. Հյուպատոսական պաշտոնատար անձը իրավունք ունի միջոցներ ձեռնարկել ներկայացվող պետության վթարի ենթարկված օդանավին, նրա անձնակազմի անդամներին և ուղևորներին օգնություն ցույց

տալու համար, ինչպես նաև կարող է այդ նպատակով օգնության համար դիմել ընդունող պետության իրավասու իշխանություններին:

3. Եթե ներկայացվող պետության օդանավը, որը վթարի է ենթարկվել ընդունող պետության կամ երրորդ պետության տարածքում, նրա իրերը կամ բեռը, որ գտնվել են ընդունող պետության տարածքում և միաժամանակ բացակայում են օդանավի հրամանատարը, սեփականատերը, նրա գործակալը կամ ապահովագրողները, կամ էլ եթե նրան ի վիճակի չեն այդ գույքը պահպանելու կամ էլ այն տնօրինելու համար միջոցներ ձեռնարկել, ապա հյուպատոսական պաշտոնատար անձը իրավունք ունի նրանց անունից միջոցներ ձեռնարկել վթարի ենթարկված օդանավը և գույքը պահպանելու կամ տնօրինելու համար:

4. Եթե ներկայացվող պետության օդանավը, նրա իրերն ու բեռը որ նշված են սույն հոդվածի 1, 2 և 3 կետերում բերվել են ընդունող պետությունում չվաճառելու կամ օգտագործելու համար, ապա դրանք մաքսատուրքերի կամ համանման այլ հարկերի չեն ենթարկվում ընդունող պետությունում:

## Հոդված 42

### Հարտակնություններ ծովային նավերի նկատմամբ

Սույն Կոնվենցիայի 38-41 հոդվածները կիրառվում են նաև ներկայացվող պետության ծովային նավերի նկատմամբ այն չափով, ինչ չափով դրանք չեն հակասում ծովային նավագնացության ընդհանրում կնքված որևէ միջազգային համաձայնագրի, որի Կողմերն են հանդիսանում երկու պետությունները:

## Հոդված 43

### Հարաբերությունները ընդունող պետության մարմինների հետ

Իրենց պարտականությունները կատարելիս հյուպատոսական պաշտոնատար անձինք կարող են դիմել.

ա/ իրենց հյուպատոսական օկրուգի իրավասու տեղական մարմիններին,

բ/ ընդունող պետության իրավասու կենտրոնական մարմիններին՝ այն չափով, ինչ չափով դա թույլ են տալիս ընդունող պետության օրենքները, կանոնները ու սովորությունները կամ համապատասխան միջազգային պայմանագրերը:

## Հոդված 44

### Հյուպատոսական գրանցումներ

1. Հյուպատոսական հիմնարկը կարող է ընդունող պետության տարածքում հյուպատոսական ակտեր կատարելու համար գրանցել ներկայացվող պետության օրենքներով ու կանոններով նախատեսվող հարկեր ու մաքսատուրքեր:

2. Հարկերի և մաքսատուրքերի ձևով հավաքվող գումարները, որոնց մասին հիշատակվում է սույն հոդվածի 1 կետում, և այդպիսի հարկերի ու մաքսատուրքերի ստացման ստացակալները ընդունող պետությունում ազատվում են բոլոր հարկերից, տուրքերից ու մաքսերից:

## Հոդված 45

### Հյուպատոսական հիմնարկի աշխատողների պարտականությունների դադարեցումը

Հյուպատոսական հիմնարկի աշխատողի պարտականությունները դադարեցվում են մասնավորապես.

ա/ ներկայացվող պետության կողմից ընդունող պետության արված այն ծանուցումից, հետո, որ նրա պարտականությունները դադարեցվում են,

բ/ էկզեկվատուրան կամ ընդունող պետության կողմից արված մեկ այլ թույլտվություն չեղյալ հայտարարվելուց հետո՝ սույն Կոնվենցիայի 3 հոդվածին համապատասխան,

գ/ ընդունող պետության կողմից ներկայացվող պետությանը՝ այն ծանուցումից հետո, որ ընդունող պետությունը դադարել է նրան հյուպատոսական անձնակազմի աշխատող ճանաչելուց:

## Հոդված 46

### Ընդունող պետությունից մեկնելը

Ընդունող պետությունը, նույնիսկ զինված բախման դեպքում, պետք է հյուպատոսական հիմնարկի աշխատողին և մասնավոր տնային աշխատողներին, որոնք ընդունող պետության քաղաքացիներ չեն, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին, անկախ նրանց քաղաքացիությունից, տրամադրի ժամանակ ու պայմաններ, որ անհրաժեշտ են այն բանի համար, որ նրանք կարողանան համապատասխան աշխատողների պարտականությունները դադարեցվելուց հետո պատրաստվել մեկնելու և մեկնել հնարավորին չափ շուտ: Մասնավորապես նա պետք է, անհրաժեշտության դեպքում, նրանց տրամադրության տակ դնի փոխադրամիջոցներ, որպիսիք կպահանջվեն անձամբ նրանց համար կամ ընդունող պետությունում նրանց ծեռք բերած գույքի համար, որի դուրս բերումը մեկնումի ժամանակ արգելված չէ:

## Հոդված 47

### Հյուպատոսական շենքերի և արխիվի, ինչպես նաև ներկայացվող պետության շահերի պահպանությունը բացառիկ հանգամանքներում

1. Երկու պետությունների միջև հյուպատոսական հարաբերությունների խզման դեպքում.

ա/ ընդունող պետությունը, նույնիսկ զինված բախման դեպքում պետք է հարգի ու պահպանի հյուպատոսական շենքերը, ինչպես նաև հյուպատոսական հիմնարկի գույքն ու հյուպատոսական արխիվը,

բ/ ներկայացվող պետությունը կարող է հյուպատոսական շենքերի, ինչպես նաև նրանցում գտնվող գույքի և հյուպատոսական արխիվի պահպանությունը վստահել մի երրորդ պետության, որն ընդու

նելի է ընդունող պետության համար,

գ/ ներկայացվող պետությունը կարող է իր շահերի և իր քաղաքացիների շահերի պաշտպանությունը վստահել մի երրորդ պետության, որն ընդունելի է ընդունող պետության համար:

2. Հյուպատոսական հիմնարկը ժամանակավորապես կամ վերջնականապես փակելու դեպքում կիրառվում են սույն հոդվածի 1 կետի ա/ ենթակետի դրույթները: Բացի դրանից.

ա/ եթե ներկայացվող պետությունը ընդունող պետությունում չունի դիվանագիտական ներկայացուցչություն, բայց այդ պետության տարածքում ունի մեկ ուրիշ հյուպատոսական հիմնարկ, այդ հյուպատոսական հիմնարկին կարող է վստահվել փակված հյուպատոսական հիմնարկի շենքերի պահպանությունը՝ նրանցում գտնվող գույքի ու հյուպատոսական արխիվի հետ մեկտեղ և, ընդունող պետության համաձայնությամբ, հյուպատոսական պարտականությունների կատարումը այդ հյուպատոսական հիմնարկի օկրուգում. կամ

բ/ եթե ներկայացվող պետությունը ընդունող պետությունում չունի ոչ դիվանագիտական ներկայացուցչություն, ոչ էլ մեկ ուրիշ հյուպատոսական հիմնարկ, կիրառվում են սույն հոդվածի 1 կետի բ/ և գ/ ենթակետերի դրույթները:

## Հոդված 48

### Ուժի մեջ մտնելն ու գործողության ժամկետը

1. Սույն Կոնվենցիան, Պայմանավորվող Կողմերի օրենսդրությանը համապատասխան, ենթակա է վավերացման և ուժի մեջ է ոտնում վավերագրերի փոխանակումից հետո երեսուներորդ օրը:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մնում մինչև վեց ամիսն անցնելն այն օրից, երբ Պայմանավորվող Կողմերից մեկը մյուս Պայմանավորվող Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր կծանուցի սույն Կոնվենցիայի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կնքված է 1995 դեկտեմբերի 26-ին ք. Երևան, 2 օրինակից, յուրաքանչյուրը չինարենով, հայերենով և ռուսերենով, ընդ որում՝ երեք տեքստերն էլ համազոր են:

ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ